

սփռել, որ դեռ այժմ (1670) պէտք է կատարուի տեղ տեղ, ուր որ սարարկը մաշած է»⁽¹⁴⁵⁾։ Եւ այսպէս շնորհիւ գորղերուն՝ ուղտերը անվտանգ կրնային անցնիլ։

Նոյնպէս ձիւնին վրայէն անցնելու համար գորղեր կը գործածուէին, նոյնիսկ դար մը առաջ։ Կը վկայուի որ ճամբորդները «ստիպուած էին գորղեր սփռել ձիւնի վրայ երկար միջոց, որպէսզի իրենց ձիերը կարենային քալելով անցնիլ»⁽¹⁴⁶⁾։

Թաւերնիէ պատմելով Թաւրիզէն Կ. Պոլիս դացող կարաւաններու մասին կ'ըսէ. «սակայն յուսթի գետնի կամ լպրծուն ճամբաներու վրայ քչողները կը ստիպուին երբեմն իրարու ետեւէ հարիւր հատ գորղ սփռել, այլապէս ուղտերուն ետեւի ոտքերը կրնան պոկուիլ յետոյքէն»⁽¹⁴⁷⁾։ Ան ուղտերու ծննդեան մասին խօսելով կ'ըսէ. «անմիջապէս որ ուղտը ծնի՝ անոր ոտքերը փորին տակ կը ծալեն եւ կը ստիպեն որ այդպէս պառկի, յետոյ մինչեւ գետին հասնող գորղով մը կոնակը կը ծածկեն ու չորս կողմը քարեր կը դնեն որպէսզի ան չկարենայ ըարձրանալ, եւ տասնեւհինգ-քսան օր այսպէս կը ձգեն»⁽¹⁴⁸⁾։

Գորղի ուրիշ գործածութիւն մըն ալ կայ ջերմի համար, այսինքն ֆիւրսիւն, որ է տաք թոնիրին վրայ դրուած գորղէ ծածկոցը, անիկա երբեմն «մեծ գորղ մըն է»⁽¹⁴⁹⁾։

Գորղը հայոց նիւթ եղած է նաեւ նուէրի, օթիտի, գողութեան, բնահարկի եւ առեւտուրի։ Գորղի վաճառականութեան մասին յատկապէս պիտի ծանրանամ յաջորդ գլխուն մէջ։

(145) A Collection of Voyages... — London, 1684, Vol. I, p. 27. Պարսկական կոշտ գորղերու գոյութեան համար նոյն հեղինակը կը վկայէ որ Շահ Սէֆի (1629-1642) երբ կ'այցելէ Նազար Մահմէտ Ալի Պէկի տունը կը զարմանայ միայն «կոշտ գորղեր» տեսնելուն։ (Անդ, էջ 43)։

(146) Missionary Researches in Armenia. — London, p. 437.

(147) Անդ, էջ 50։

(148) Անդ, էջ 49։

(149) Modern History. — Thos, Salmon, London, 1739, p. 370.